ՀՏԴ 721. 001 ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Ս.Խ.Գյուլխանջյան

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Կատարված է ՀՀ Լոռու մարզի կայուն զարգացման համար անհրաժեշտ պոտենցիալ հնարավորությունների համալիր վերլուծություն և զարգացման ուղիների և գործողությունների պլանի միջոցով հանձնարարականների նախանշում՝ դրանց փուլ առ փուլ իրագործման նպատակով: Տնտեսության զարգացման համագոր ճյուղեր են դիտարկվում գբոսաշրջությունը և գիտելիքահենք արտադրությունները, որոնց անհրաժեշտ ենթակառուցվածքների համալրումը հնարավոր կդարձնի առաջադրված գործողությունների իրականացումը: Բնակավայրերը կայուն զարգաման սկզբունքներին համապատասխան զարգացնելու համար դիտարկվել է դրանց ձևավորված հատակագծային կառուցվածքի, խտությունների, հանրային տարածքների, ինժեներական և կոմունալ ենթակառուցվածքների արդիականացումը, լքված արտադրական տարածքների վերակազմավորումը: Նշված գործընթացում առանձնակի կարևորություն է ներկայացնում պատմամշակութային ժառանգության պահպանության և վերականգնման խնդիրները:

Առանցքային բառեր. *քաղաքաշինական գործընթացներ, կայուն զարգացում, տարածքների համաչափ զարգացում, հանրային ենթակառուցվածքներ, արդյունաբերական տարածքների վերակազմավորում*

Լոռու մարզի կայուն զարգացման հիմնախնդիրները փոխադարձ կապված են ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի դրույթների հետ [1]: Ծրագիրը վերանայել է «Կայուն զարգացման ծրագիրը» (ԿԶԾ)՝ հաշվի առնելով համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված զարգացումներն ու նոր իրողությունները (նկ.1): Ծրագիրը որպես հիմնական նպատակ, քաղաքականության ուղղություններ և թիրախներ դիտարկել է.

- զբաղվածության ավելացումը որակյալ, բարձր վարձատրվող



Նկ. 1. Լոռու մարզի քաղաքները մարզի տարաբնակեցման համակարգում

աշխատատեղերի ստեղծման ճանապարհով՝ որպես կայուն տնտեսական աճի ապահովման արդյունք,

- արդյունաբերական քաղաքականության տեսլականը՝ Հայաստանը բարձրարժեք և գիտատար ապրանքների և ծառայությունների արտադրության երկիր դարձնելը, որի առանցքը ստեղծագործ մարդկային կապիտալն է:

Ներգնա զբոսաշրջությունը Հայաստանի արտահանման երկրորդ խոշորագույն ոլորտն է հանքահումքային արտադրանքի և մետաղներից հետո և ապահովում է ծառայությունների արտահանման կեսից ավելին: Տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտը ևս հայտարարվել է Հայաստանի տնտեսության գերակա ճյուղերից մեկը, որի զարգացումը սկզբունքային ներդրում է ունենալու գիտելիքահենք տնտեսության անցնելու գործընթացում:

Ներկայումս մարզի քաղաքների մեծ մասի տնտեսությունը հիմնված է ռեսուրսատար արդյունաբերության վրա: Ուստի, ք.Երևանից դուրս զբոսաշրջության ենթակառուցվածքների ստեղծման և արդիականացման խնդիրն արդիական է նաև Լոռու մարզի կայուն տնտեսական զարգացման համար՝ հաշվի առնելով մարզի ռեսուրսային պոտենցիալը [2]:

Մարզն ունի չօգտագործված մեծ հնարավորություններ զբոսաշրջության ոլորտում և՛ որպես տարածքային քաղաքականության իրականացման գործիք, և՛ որպես բարձրորակ ծառայությունների մատուցման հաշվին տնտեսական աճին նպաստող արդյունք: Զբոսաշրջության զարգացմանը զուգընթաց այս ոլորտում կիրականացվի զբոսաշրջային ենթակառուցվածքի զարգացում (նոր հյուրանոցային համալիրների և հանգստյան տների կառուցում), ինչը նույնպես կխթանի համաչափ տարածքային զարգացմանն ու նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Մարզի գրեթե բոլոր քաղաքներում ևս առկա են պատմամշակութային արժեք ներկայացնող ժառանգության հատված, բնակլիմայական բարենպաստ պայմաններ և բուժական ռեսուրսներ: Մարզի համար առկա է նաև գիտատար արտադրությունների ներդրմամբ տնտեսության զարգացման հնարավորությունը՝ հաշվի առնելով մարզի քաղաքներում (Վանաձոր, Սպիտակ, Տաշիր) առկա կրթական ոլորտի պոտենցիալը: Նման ծրագրերի իրականացումը կարևոր է տարածքների համաչափ զարգացումն ապահովելու տեսանկյունից:

Առավել լիարժեք ներկայացնելու համար քաղաքների ներկա պատկերը, բացթողումներն ու առկա խնդիրները, որի հիման վրա պետք է առաջադրվեն վերոնշյալ խնդիրների լուծման ուղիները, ստորև ներկայացվում է քաղաքների համալիր գնահատումը՝ ըստ կայուն զարգացման հիմնական բաղադրիչների [3] (աղյուսակ):

Աղյուսակ

Քաղաքների գնահատումն ըստ կայուն զարգացման հիմնական բաղադրիչների առկայության

Անվանում	Առկա վիճակ	Գլխավոր խնդիրներ	Պոտենցիալ հնարավորություններ	Հեռանկարային առաջարկ
1	2	3	4	5
Տնտեսական				
Վանաձոր	• Արդյունաբերություն, • նորագույն տեխնոլոգիաներ, • մշակույթ, • ռեկրեացիա	• Դեգրադացված արդյունաբերական գոտի, • հնացած ենթակառուցվածքներ	Վերակազմավորում՝ • նորագույն տեխնոլոգիաների տարածքային կենտրոնի, • մարզային մշակութային կենտրոնի	• Գիտահետազոտական հիմնարկությունների կառուցում, • արդյունաբերության արդիականացում, • հանգստի գոտու ընդլայնում և ենթակառուցվածքների արդիականացում
Ալավերդի Ախթալա Շամլուղ	• Արդյունաբերություն, • զբոսաշրջություն, • ռեկրեացիա	• Հնացած ենթակառուցվածքներ, • արդյունաբերությանը զուգահեռ այլ տնտեսական ճյուղերի բացակայություն	Վերակազմավորում՝ • տարածաշրջանային արդյունաբերական կենտրոնի, • տարածաշրջանային զբոսաշրջային կենտրոնի	• Ենթակառուցվածքների վերակառուցում և ընդլայնում, • արդյունաբերության սանիտարական գոտուց բնակելի տարածքների հեռացում՝ գոյություն ունեցող կառուցապատման խտացման հաշվին
Թումանյան Ստեփանա-վան Տաշիր	• Ռեկրեացիա, • զբոսաշրջություն	• Հնացած ենթակառուցվածքներ, • քաղաքաստեղծ ձեռնարկության բացակայություն, • ընդհանուր ռեկրեացիոն ցանցի բացակայություն	Վերակազմավորում՝ • տարածաշրջանային նշանակության հանգստի և զվարճանքի կենտրոնի, • զբոսաշրջային կենտրոնի	• Հանգստյան համընդհանուր գոտու ստեղծում, • սպասարկման օբյեկտների և ենթակառուցվածքների զարգացում
Սպիտակ	• Արդյունաբերություն	• Խարխուլ ենթակառուցվածքներ (աղետի հետևանքով)	Վերակազմավորում՝ • տարածաշրջանում աշխատանքային միգրացիայի կենտրոնի՝	• Գործող հիմնարկությունների ընդլայնում և հզորացում
Բնապահպանական				
Վանաձոր Ալաբերդի Ախթալա Շամլուղ	• Շրջակա միջավայրի աղտոտվածության բարձր մակարդակ	• Մթնոլորտի, ջրի և հողի աղտոտվածություն, • կանաչ միասնական հիմնակմախքի բացակայություն	Վերակազմավորում՝ • կանաչապատ տարածություններով հարուստ, բնապահպանական առողջ միջավայրով քաղաքի	• Շրջակա միջավայրի վիճակի բարելավմանն ուղղված միջոցառումներ, • կամաչ տարածքների ընդլայնում, միասնական կանաչ համակարգի ստեղծում
Թումանյան	• Քաղաքի սահմաններում կանաչ տարածքների ոչ բավարար քանակ	• Հասարակական օգտագործման կանաչ տարածքների պակաս	Վերակազմավորում՝ • ներքաղաքային կանաչ գոտիներով և անտառային տարածքներով շրջապատված քաղաքի	• Նոր հասարակական կանաչ տարածքների ստեղծում, կանաչ հիմնակմախքի ձևավորում
Ստեփանավան Տաշիր Սպիտակ	• Շրջակա միջավայրի բավարար վիճակ	• Միասնական ներքաղաքային կանաչ հիմնակմախքի բացակայություն	Վերակազմավորում՝ • կանաչապատ, ընդարձակ ռեկրեացիոն գոտիներով զբոսաշրջային քաղաքի	• Այգեպուրակային միասնական համակարգի ստեղծում քաղաքի սահմաններում, • ռեկրեացիոն գոտիների ընդլայնում քաղաքի շրջակայքում

1	2	3	4	5
Սոցիալական				
Վանաձոր Ստեփանա-վան Տաշիր Թումանյան Սպիտակ Ալավերդի Ախթալա Շամլուղ	• Գործազրկություն և աշխատատեղերի պակաս, • հնացած բնակելի ֆոնդ, • գյուղատիպ ավանին բնորոշ բնակելի ֆոնդի առկայություն	• Քաղաքաստեղծ խոշոր ձեռնարկությունների բացակայություն • Արդյունաբերությանը զուգահեռ տնտեսության այլ ճյուղերի բացակայություն	Վերակազմավորում՝ • բարձր կենսամակարդակով և կյանքի պայմաններով բնակավայրի	• Սոցիալական և տնտեսական ծրագրերի իրականացում, • քաղաքաշինական ծրագրեր, ուղղված բնակելի ֆոնդի թարմացմանը • Տնտեսական այլ ճյուղերի զարգացում

Ընդհանրացնելով վերոնշյալ հետազոտության արդյունքերը, ստորև ներկայացվում է մարզի ուժեղ, թույլ կողմերի, հնարավորությունների և ռիսկերի (*SWOT)* վերլուծությունը (նկ. 2).

Նկ. 2. Լոռու մարզի պոտենցիալի գնահատման սխեմա (SWOT վերլուծություն. ուժեղ, թույլ կողմեր, հնարավորություններ և ռիսկեր)

Հանրագումարի բերելով SWOT վերլուծության արդյունքները, մարզի քաղաքների ռեսուրսային և մարդկային ներուժը, ստորև ներկայացվում են մարզի քաղաքների կայուն զարգացումն ապահովելուն միտված միջոցառումների համալիրը (գործողությունների պլան).

- քաղաքների հանրային ենթակառուցվածքների զարգացում,
- մայրուղային կապերի և կրկնակված կապերի ապահովում,
- ռեկրեացիոն նպատակներով միակ՝ Վանաձոր քաղաքի միջով անցնող մայրուղային ճանապարհին զուգահեռ Շամլուղ-Տաշիր ուղղությամբ այլընտրանքային կապի ապահովում՝ կապելով քաղաքները նաև հյուսիս-հարավ ուղղության տարանցիկ մայրուղուն,
- անդրսահմանային տարածքների օգտագործման համատեղ կանոնակարգերի մշակում,
- հարակից երկրի (Վրաստան) հետ մշակութային, տնտեսական և զբոսաշրջային կապերի ապահովում,
- քաղաքների համար ժամանակակից պահանջները բավարարող քաղաքաշինական կանոնակարգերի մշակում,
- պատմության և մշակույթի հուշարձանների ազդեցության գոտիների առանձնացում և դրանց օգտագործման ռեժիմների սահմանում,
- պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության միջոցառումների իրականացում և մշտադիտարկման ապահովում,
- քաղաքներում կառուցապատման խտությունների համաչափ վերաբաշխում,
- քաղաքային տրանսպորտային և ինժներական ենթակառուցվածքների արդիականացում և համապատասխանեցում առաջադրվող գործառույթի պահանջներին (հետիոտն, հեծանվային շավիղներ, ճոպանուղիներ և այլն),
- միջքաղաքային և ռեկուլտիվացված չօգտագործվող նախկին արտադրական տարածքներում հետաքրքրության նոր օբյեկտների ձևավորում (քաղաքների պատմական կերպարների մանրակերտերի վերարտադրում, պատմական Հայաստանի առանձին հատվածների վերարտադրում՝ մանրակերտերի միջոցով և այլն) [4],
- քաղաքներում պատմական հատվածների հենքի վրա զբոսաշրջային թաղմասերի ձևավորում,
- քաղաքների դիմակայունությանն ուղղված միջոցառումների իրականացումը (հակահեղեղային, հակասողանքային, սեյսմիկ ռիսկի նվազեցման),
- մարզի քաղաքներում էներգիայի այլընտրանքային աղբյուրների օգտագործում, էներգախնայող և տեղական հումքի վրա հիմնված շինարարության իրականացում [5],
- կայուն ֆինանսական մեխանիզմների ապահովում:

С.Х.Гюлханджян

ГРАДОСТРОИТЕЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ МАРЗА ЛОРИ РА

Проведен комплексный анализ потенциальных возможностей, необходимых для обеспечения устойчивого развития Лорийского марза РА и разработаны рекомендации. Соразмерными отраслями экономики в данном случае являются туризм и промышленность, которые, при обеспечении соответствующими инфраструктурами, могут обеспечить выполнение вышеуказанных процессов. Для развития поселений согласно принципам устойчивого развития рассмотрены вопросы модернизации сформированных планировочных структур, инженерных коммуникаций, реорганицации деградированных промышленных зон. В данном процессе особое значение придается вопросам сохранения и восстановления культурно-исторического наследия.

***Ключевые слова**: градостроительные процессы, устойчивое развитие, соразмерное развитие территорий, общественные инфраструктуры, реорганизация промышленных территорий*

S.Kh.Gyulkhanjyan

THE URBAN PROBLEMS OF SUSTAINABLE DEVELOPMENT OF LORI MARZ OF RA

A comprehensive analysis of the potential opportunities of the Lori marz outlines ways for sustainable development is carried out, and through the action plan gives the required directions for their phased implementation. The commensurate sectors of the economy in this case are tourism and industry, which, with the provision of appropriate infrastructures, can release the above mentioned processes. For the development of settlements in accordance with the principles of sustainability, issues of modernization of public places, engineering communications, degraded industrial zones in planning structures of cities were considered. In this process, special importance is given to the preservation and restoration of cultural and historical heritage.

***Keywords:** Urban development processes, sustainable development, proportional development of territories, public infrastructure, reorganization of industrial areas*

Գրականություն

1. Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր. հաստատված ՀՀ Կառավարության 2014 թ. մարտի 27-ի N 442 - Ն որոշմամբ:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի 2014-2017 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր. Հավելված. ՀՀ Կառավարության 2014թ.փետրվարի 6-ի, N113-ն որոշման:
3. http://lori.mtad.am/about-communities/
4. Արտադրության և սպառման թափոնների տեղադրման և վնասազերծման անվտանգ պայմանների ուղեցույցին հավանություն տալու մասին. ՀՀ Կառավարության արձանագրային որոշման նախագծի հիմնավորում, 19.04.2012թ:

5. Քաղաքների պլանավորման, բնակարանային տնտեսության, էներգաարդյունավետության և աղետների ռիսկերի նվազեցման ազգային կարողությունների հզորացում // Աշխատաժողով. - Երևան, 2014։

Գյուլխանջյան Սերոբ Խոսրովի *(ՀՀ, ք.Երևան) - ՃՇՀԱՀ, ՃՏՊԾՎԳԱՆՊ ամբիոն, ասպիրանտ, (+374) 93219413,* serobgyulkhangyan@yahoo.com
Гюлханджян Сероб Хосровович *(РА, г.Ереван) – НУАСА, кафедра ТАРРИАНИИиИ, аспирант, (+374) 93219413,* serobgyulkhangyan@yahoo.com
Gyulkhanjyan Serob Khosrov *(RA, Yerevan) – NUACA, chair of ATHRRFAH, postgraduate student, (+374) 93219413,* serobgyulkhangyan@yahoo.com

Ներկայացվել է՝ 16.03.2017թ.
Ընդունվել է տպագրության՝ 21.03.2017թ.